

բաղկացած, որ կը կրէ՝ «*Երջանկութեան բարոյագիտութիւն*» (յուն. բնագիր՝ „*êthiká eudaimonía*”) անունը:

Առաքինութեան բարոյագիտութիւն տեսութեան *երջանկապաշտական* հիմնական գաղափարը, իր դասական արիստոտելեան ձեւին մէջ, հետեւեալն է.- բարոյական հարցերու եւ քննարկման գլխաւոր նպատակը, անհատին բարոյական *բարի* կամ *առաքինի* նկարագիր մը կերտելուն մէջ կը կայանայ: Անհատի այս նկարագիրը, միաժամանակ, թէ՛ պայմանն եւ թէ արդիւնքն է՝ նպատակադրուած լաւ կեանքին ու երջանկութեան: Այլ խօսքով, առաքինութիւնները միայն միջոցներ չեն՝ երջանկութեան հասնելու համար, այլ երջանկութեան բաղադրիչ մասերը:

Արիստոտելի մօտ «լաւ կեանքի ու երջանկութեան» նախագիծը, սակայն, միայն անհատական բնոյթ չի կրեր, այլ բնականաբար կ'ընդգրկէ ամբողջ ընկերութիւնը, որովհետեւ առաքինի նկարագրով անհատ մը, առաջին՝ իր լաւ կեանքը կ'ունենայ եւ երկրորդ՝ երջանկութեան կը հասնի, *միայն* առաքինութեանց ճամբով եւ *միայն* բարի ընկերութեան մը ծիրէն ներս:

Արիստոտելի բարոյագիտութեան հիմնական հասկացութիւնները կը կազմեն՝ *բարին*, *երջանկութիւնը* եւ *առաքինութիւնը*, որոնք ստորեւ, առանձնաբար ու որոշ մանրամասնութեամբ կը ներկայացնեմ:

1. ԲԱՐԻՆ

Արիստոտելի համաձայն, *բարին* կարելի է բնորոշել, որպէս անհատին համար ընտրելի ու ձգտելի բարիքը: Այլ խօսքով, եթէ անհատին համար արարք մը *բարի* է, ան կը ձգտի իրագործել այդ արարքը: Այս իմաստով, անհատին համար, բարիքը ձգտումի (յուն.՝ *órexis*) նպատակակէտ մըն է. ձգտում մը, որ կը բխի ներքին բռնուն տենչանքէ մը:

Արիստոտել կը զանազանէ բարիքի հետեւեալ երեք տեսակները.-

- ա) **Արտաքին բարիքը**, ինչպէս՝ նիւթական հարստութիւնը, լաւ ընկերները, բարձր պատիւը, ազնուական ընտանիքէ ծագումը, լաւ զաւակները, բարենպաստ ճակատագիրը, եւայլն...
- բ) **Ներքին մարմնական բարիքը**, ինչպէս՝ առողջութիւնը, գեղեցկութիւնը, ուժի կարողութիւնը եւ
- գ) **Ներքին հոգեկան բարիքը**, ինչպէս՝ առաքինութիւնները, որոնք բարոյագիտութեան համար կարեւորագոյններն են:

Արտաքին բարիքը եւ ներքին մարմնական բարիքը, Արիստոտել կը նկատէ՝ *պատահական բախտ* (յուն.՝ *eutychia*): Իսկ *ներքին հոգեկան բարիքը*, Արիստոտելի համաձայն, նոյնիսկն առաքինութիւնն է:

Ձգտելի նպատակները, Արիստոտելի համաձայն, ունին իրենց նուիրապետական յատուկ կարգը: Օրինակի համար, անհատը կը ճգնի՝ աւարտական քննութիւն մը պատրաստելու համար. յաջող քննութեան արդիւնքը՝ վկայական մըն է, որով անհատը աշխատանք մը կրնայ ապահովել. աշխատանքն ալ,